ՔԱՂՎԱԾՔ

<< Երևանի Գայի / Հայկ Բժշկյանց / անվան հ. 129 հիմնական դպրոց>>ՊՈԱԿ-ի
Ծնողական խորհրդի արձանագրությունների մատյանից

2022 թվականի մարտի 9-ին տեղի ունեցավ << Երևանի Գայի / Հայկ Բժշկյանց / անվան հ. 129 հիմնական դպրոց>>ՊՈԱԿ-ի ծնողական խորհրդի արտահերթ նիստը:
Ծնողական խորհրդի նիստին մասնակցում էին 11 ծնողական խորհրդի անդամներից 9-ը , բացակա՝ 2: Ներկա էին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Հանրակրթության վարչության ներկայացուցիչներ Լ.Ապետյանը և Հ.Իսոյանը:
ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
<< Երևանի Գայի / Հայկ Բժշկյանց / անվան հ. 129 հիմնական դպրոց>>ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի թափուր տեղի համար մրցույթին դիմած հավակնորդների դպրոցի զարգացման ծրագրերի / 2022-2027 թթ./ քննարկման հարցը: /Զեկ. Հաստատության ծնողական խորհրդի նախագահ Գ.Վարդանյան /
ԼՍԵՑԻՆ՝
Դպրոցի ծնողական խորհրդի նախագահ Գ.Վարդանյանի զեկույցն այն մասին , որ դպրոցի տնօրենի թափուր տեղի համար դիմել են 2 թեկնածուներ՝
1.Անուշ Կոլյայի Մարտիրոսյան
2.Անուշ Ստյոպայի Պետրոսյան
Յուրաքանչյուր հավակնորդի հատկացվեց 20 րոպե ժամանակ՝ զարգացման ծրագրի քննարկման համար:
Համաձայն վերը նշված որոշումների 13-րդ կետի հավակնորդների դպրոցի զարգացման ծրագրին ծնողական համայնքը ծանոթացել էր դպրոցի պաշտոնական կայքից: Հավակնորդները հակիրճ ներկայացրին դպրոցի զարգացման ծրագրերը՝նշելով ուժեղ և թույլ կողմերը , հնարավոր ռիսկերն ու ակնկալվող արդյունքները: Հավակնորդները պատասխանեցին խորհրդի անդամների հարցերին:
Ծրագրի քննարկումից հետո ծնողական խորհրդի 9 անդամներից ընտրեցին հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝
1.Գ.Վարդանյան
2.Ս.Հակոբյան
3.Լ.Հակոբջանյան
Ծնողխորհրդի 3 անդամները հաստատեցին քվեաթերթիկները , ստորագրեցին և իրականացվեց փակ գաղտնի քվեարկություն:
Ամփոփվեցին քվեարկության արդյունքները՝
Անուշ Կոլյայի Մարտիրոսյան – 6 ձայն
Անուշ Ստյոպայի Պետրոսյան - 3 ձայն
Հաշվի առնելով քվեարկության արդյունքները Անուշ Կոլյայի Մարտիրոսյանը համարվում է տնօրենի՝ ծնողական խորհրդի թեկնածուն:

Նիստի նախագահ՝ Գ.Վարդանյան
Քարտուղար՝ Ս.Հակոբյան